ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ա. Խլաթի գաւայի, Զիգիրօք գիւղացի Աբդալ Մխիթարեանը խնդրում է բարի մարդոց հաղորդել իրեն, եթէ գիտեն, թէ ո՞ւր են գտնւում իւր

ա) աղջիկը Զօյրօ, 12 տարեկան, միջահասակ, շիկահեր, ցորնագոյն մորթ.

բ) տղան Քեարիամ, 7 տարեկան։

Կորցրել է նոցա «Խամուր» ձորն անցնելու ժամանակ։

Բ. – Բիթլիսի վիլայէթի, Բուլանըխի շրջանի, Լիզ գիւղացի Ալմաստ Յովհաննէսեան Պետրոսեանը որոնում է իւր զաւակներին, որոնց կորցրել է Իգդիրում հիւանդացած ժամանակ.

ա) Անդրանիկ, 7 տարեկան, ցորենագոյն, շէկ մազեր.

բ) Սաբրէ (աղջիկ) 20 տարեկան, շէկ մազերով, բարձրահասակ, աչքերը շագիկ.

գ) Արփիար, 20 տարեկան, բարձրահասակ, ցորենագոյն, շիկահեր.

դ) Սանդրօ, շէկ մազերով, ցորնեգոյն մորթ, աջ այտի վերայ մի խալ, միջահասակ.

Թէ Ա. և թէ Բ. մասին տեղեկութիւն տալ Աղէքսանդրօպոլի փոխանորդ Տ. Արտակ Վարդապետին հաղորդելու ծնողներին։

Գ.—Վանայ նահանգի Ալչվազ աւանի բնակիչ այրի Սառա Նալբանդեանը խնդրում է բարեսիրտ անձերից տեղեկութիւն հաղորդել, եթէ յայտնի է նոցա թէ ո՞ւր են գտնւում

ա) իւր որդի 25 տարեկան Առաքել Ստեփանեան Նալբանդեան և վերջնիս հօրեղբօր որդի,

բ) Սահակ Պետրոսեան Նալբանդեան, 25 տարեկան։

Այդ որբերին բերել է 1896 թ. Էջմիածին և այնուհետև տեղեկութիւն չունի նոցա մասին։

Խնդրում է տեղեկութիւնները հաղորդել Երևան, Թափաբաշ, Церковная улица № 10. Սառա Բաղդասարեան Նալբանդեանցին։